ետք իսրայելեան բանակը սպասեց Ամերիկայի պետութեան հակազդեցութեան, իսկ այդ հակազդեցութիւնը խղճալի էր: Այժմ իսրայել գիտէ, թէ կրնայ հաշուետու չլլալ իր արարքներուն համար եւ քաջալերուած է շարունակելու իր ընթացքը»:

Նախ գոհ գնաց Պրայըն էվըրին. 24 տարեկան ամերիկացի մը, որուն դէմքին կրակեցին Ապրիլ 5ին: Ապա, Ապրիլ 11ին կրակեցին «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի բրիտանացի անդամ Թոմ Հարնտալի վրայ. ան գլուխէն վիրակուրուեցաւ եւ անոր ուղեղը անդամալուծուեցաւ: Յաջորդ ձէյմա Միլըրն էր. բրիտանացի նկարիչը, որուն հագած անթեւ բաճկոնին վրայ «Թի. Վի.» գրուած էր, սակայն միեւնոյն էր. անոր վրայ կրակեցին եւ ան մահացաւ: Այս բոլորին պարագային ականատեսներ կ'ըսեն, թէ կրակողները իսրայելացի զինուորներ էին:

Ձեռքից Լինչի եւ Ռէյչըլ Քորիի հասարակաց այլ յատկանիշ մը եւս ունին. անոնց պատմութիւնները խեղաթիւրուած են զինուորականութեան կողմէ, յատուկ նպատակներով: Պաշտօնական պատմութեան համաձայն, Լինչի գերեզմարուած էր արիւնալի բախումի մը ընթացքին, վատ վերաբերումի արժանացած էր իրաքցի նենգ բռնիչներու կողմէ, ապա փրկուած էր փամփուշտներու այլ տարափի մը տակ, հերոսական Մոմլուսի ֆոկերուն կողմէ: Վերջին քանի մը շաբաթներուն պատմութեան այլ տարբերակ մը յայտնուած է. Լինչը ինամած բռնիչները պատերազմի վէրքերու ապացոյցներ չեն գտած անոր մարմինները վրայ եւ իրենց սեփական արիւնը նուիրած են անոր կենալը փրկելու համար: Իսկ ամէնէն ամօթալին՝ ականատեսներ «Պի. Պի. Մի.» յայտնած են, թէ այդ յանդուգն Մոմլուսի ֆոկերը հիւանդանոց խուճեկու ընթացքին արդէն գիտէին, թէ իրաքցի կողմից չէին մնացած չըլնանին մէջ:

Սակայն մինչ Լինչի պատմութիւնը խեղաթիւրուած է, անոր տիպարները անելի հերոսական ցոյց տալու համար, Քորիի պատմութիւնը եւս շրջուած է յետ մահու, եւ «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամները ձեռնարկած կը թուին ըլլալ:

Ամերիկեան ի վեր իսրայելեան բանակը պատճառ կը փրկուէր ձեռքազատելու համար «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի «խռովարարներէն»: Անձնասպանական գործողութիւն գործած երկու բրիտանացիներ՝ Ասիֆ Մուսաձէտ Հանիֆ եւ Օմար Նան Շարիֆ լաւ պատրուակներ էին: Անոնք ներկայ եղած էին Ռաֆաէլի մէջ Քորիի մահուան յիշատակի արարողութեան մը: Իրողութիւն մը, զոր իսրայելեան բանակը օգտագործեց «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի եւ ահաբեկչութեան միջեւ կապ մը գտնելու համար: «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամները կը մատնանշեն, թէ արարողութիւնը բաց էր հանրութեան դիմաց, եւ իրենք ոչինչ գիտէին բրիտանացի այցելուներուն նպատակներուն վերաբերեալ:

Վերջին շաբաթներուն «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամներէն շուրջ 6 հոգի ձեռքազատուած է, շատեր արտաքսուած են երկրէն եւ կազմակերպութեան գրասենեակները խուճեկուրուած են: Չայն ճգմեկու արշաւին

ետք իսրայելեան բանակը սպասեց Ամերիկայի պետութեան հակազդեցութեան, իսկ այդ հակազդեցութիւնը խղճալի էր: Այժմ իսրայել գիտէ, թէ կրնայ հաշուետու չլլալ իր արարքներուն համար եւ քաջալերուած է շարունակելու իր ընթացքը»:

Նախ գոհ գնաց Պրայըն էվըրին. 24 տարեկան ամերիկացի մը, որուն դէմքին կրակեցին Ապրիլ 5ին: Ապա, Ապրիլ 11ին կրակեցին «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի բրիտանացի անդամ Թոմ Հարնտալի վրայ. ան գլուխէն վիրակուրուեցաւ եւ անոր ուղեղը անդամալուծուեցաւ: Յաջորդ ձէյմա Միլըրն էր. բրիտանացի նկարիչը, որուն հագած անթեւ բաճկոնին վրայ «Թի. Վի.» գրուած էր, սակայն միեւնոյն էր. անոր վրայ կրակեցին եւ ան մահացաւ: Այս բոլորին պարագային ականատեսներ կ'ըսեն, թէ կրակողները իսրայելացի զինուորներ էին:

Ձեռքից Լինչի եւ Ռէյչըլ Քորիի հասարակաց այլ յատկանիշ մը եւս ունին. անոնց պատմութիւնները խեղաթիւրուած են զինուորականութեան կողմէ, յատուկ նպատակներով: Պաշտօնական պատմութեան համաձայն, Լինչի գերեզմարուած էր արիւնալի բախումի մը ընթացքին, վատ վերաբերումի արժանացած էր իրաքցի նենգ բռնիչներու կողմէ, ապա փրկուած էր փամփուշտներու այլ տարափի մը տակ, հերոսական Մոմլուսի ֆոկերուն կողմէ: Վերջին քանի մը շաբաթներուն պատմութեան այլ տարբերակ մը յայտնուած է. Լինչը ինամած բռնիչները պատերազմի վէրքերու ապացոյցներ չեն գտած անոր մարմինները վրայ եւ իրենց սեփական արիւնը նուիրած են անոր կենալը փրկելու համար: Իսկ ամէնէն ամօթալին՝ ականատեսներ «Պի. Պի. Մի.» յայտնած են, թէ այդ յանդուգն Մոմլուսի ֆոկերը հիւանդանոց խուճեկու ընթացքին արդէն գիտէին, թէ իրաքցի կողմից չէին մնացած չըլնանին մէջ:

Սակայն մինչ Լինչի պատմութիւնը խեղաթիւրուած է, անոր տիպարները անելի հերոսական ցոյց տալու համար, Քորիի պատմութիւնը եւս շրջուած է յետ մահու, եւ «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամները ձեռնարկած կը թուին ըլլալ:

Ամերիկեան ի վեր իսրայելեան բանակը պատճառ կը փրկուէր ձեռքազատելու համար «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի «խռովարարներէն»: Անձնասպանական գործողութիւն գործած երկու բրիտանացիներ՝ Ասիֆ Մուսաձէտ Հանիֆ եւ Օմար Նան Շարիֆ լաւ պատրուակներ էին: Անոնք ներկայ եղած էին Ռաֆաէլի մէջ Քորիի մահուան յիշատակի արարողութեան մը: Իրողութիւն մը, զոր իսրայելեան բանակը օգտագործեց «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի եւ ահաբեկչութեան միջեւ կապ մը գտնելու համար: «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամները կը մատնանշեն, թէ արարողութիւնը բաց էր հանրութեան դիմաց, եւ իրենք ոչինչ գիտէին բրիտանացի այցելուներուն նպատակներուն վերաբերեալ:

Վերջին շաբաթներուն «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի անդամներէն շուրջ 6 հոգի ձեռքազատուած է, շատեր արտաքսուած են երկրէն եւ կազմակերպութեան գրասենեակները խուճեկուրուած են: Չայն ճգմեկու արշաւին



Լուսանկարից մեջ ակնհայտ է, որ պուլտոգրը բռնող իսրայելացի յստակորէց կրճար տեսնել Ռէյչըլը, եւ պատահածը արկած չէր:



Ռէյչըլի գանկն ու կրծքավանդակը ամբողջութեամբ ձգնուած են ամերիկեան պուլտոգրով:

Թիրախ են բոլոր «միջազգայնականները»: Այսինքն գրաւեալ հողերուն մէջ հետզհետէ նուազ թիւով օտարներ կը մնան՝ բռնադատութիւններու ականատես ըլլալու կամ օգնութեան ձեռք երկարելու համար: Միջին Արեւելքի մէջ ՄԱԿի գործակալատարը ապահովութեան խորհուրդին տեղեկացուեցած է, թէ ՄԱԿի բազմաթիւ փրկարարներու արգելուած է կապ մտնել կամ անկէ դուրս գալ, եւ արգելքը կոչած է «Իսրայելի կողմէ մարդասիրական միջազգային օրէնքներու գորտաւորութեան բռնաբարութիւն»:

Շատեր որոշած են շարունակել Քորիի աշխատանքը: Անոր յաճախած էվըրիսթի Սթէյթ Բալէթին աւելի քան 40 ուսանողներ միացած են «Ինթըրնէշնըլ սոլիտէրիսթի մուվմենթ»ի՝ այս ամառ կազմ երթալու համար:

Ուրեմն ո՞վ է հերոսը: Իրաքի վրայ յարձակումին ընթացքին Քորիի կարգ մը բարեկամները անոր լուսանկարը եւ նամակով ուղարկած էին «էմ. էս. էն. Պի. Մի.» ինդերլոյվ, որ անիկա ցուցադրուելու պատկերասփիւռի կայանին «հերոսներու պատին» վրայ, ձեռքից Լինչի կողքին: Պատկերասփիւռի այս ցանցը չընդառաջեց անոնց ինդերլոյվին: Սակայն Քորի պատիւի արժանացած է այլ ձեւերով: Անոր ընտանիքը օգրակցական աւելի քան 10 հազար նամակ ստացած է, Ամերիկայի տարածքին հաւաքակուլութիւններ յիշատակի արարողութիւններ կազմակերպած են եւ գրաւեալ հողերուն մէջ նորածիններ Ռէյչըլ կը կոչուին: Ասիկա պատկերասփիւռի համար շինուած մեծարանք մը չէ, եւ հաւանաբար աւելի լաւ է, որ այդպէս չէ:

## «ՄՇԱԿՈՒՅԻՆ ՏԱՆՁԱՆՔ»

ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱՋԱԿԱՆ ԳԵՐԻՆԵՐԸ ԽՕՍԵՑՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԸ ԴԻՄԵՆ ԸԵՒԻ ՍԵՐՁԸ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՍՓԻՐՈՒ ՍԱՆԿԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՐԱՇԵՏՈՒԹԵԱՆ: «ԵՆԸՍՅՈՒ ԻՆՅԵՐՆԵՇՆԸԸ» ԿԸ ԲՆՆԵ ԵՐԵՒՈՅԹԸ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ.

Իրաքցի այն զերիները, որոնք գործակցութիւն չեն ցուցաբերեր, երկար ժամանակ կ'ենթարկուին «Մեթալիք»ի նման ռոք խումբերուն եւ մանկական «Միսէյմ սթրիթ» եւ «Պրայնէյ» պատկերասփիւռի յայտագիրներուն երաժշտութիւնը լսելու տանջանքին, որպէսզի խոստովանութիւններ կատարեն:

Միացեալ Նահանգներու Հոգեբանական գործողութիւններու ընկերութիւնը կ'ըսէ, թէ նպատակը գերիներուն դիմադրականութիւնը խորտակել է, անքննութեան եւ մշակութային առումով ջղաքրոզութիւն պատճառող երաժշտութեան միջոցով:

Սակայն մարդկային իրաւանց «էմըսթի Ինթըրնէշնըլ» կազմակերպութիւնը կը յայտարարէ, թէ նման միջոցներ կրնան տանջանքի համագոր ըլլալ, եւ դաշնակից ուժերը անոնց կիրարկումով կը խախտեն ժընեփ Ուխտը:

Հոգեբանական գործողութիւններու ընկերութեան անդամ խմբագետ Մարք Հետսըլ «Նիուզուիթ» շաբաթաթերթին ըսած է. «Այս մարդիկը իրենց կենալը մէջ հեծի մեթոլ երաժշտութիւն չեն լսած: Պարագայն չեն հանդերձեցրել: Եթէ օրական 24 ժամ այս երաժշտութիւնը լսեն, ուղեղիդ եւ մարմնիդ գործունէութիւնը կը սկսի դանդաղել, մտածելու կարողութիւնդ կը սկսի անկախ եւ կամքդ կը խորտակուի: Այդ փառանքայն եւ կամքդ կը խորտակուի: Այդ փառանքայն կ'երթան եւ կը խօսեցնենք գանդները»:

Խմբագետ Հետսըլի նախասիրութիւններուն շարքին են «Պատիզ» փապակէնին երաժշտութիւնը եւ Մեթալիքայի «էնթըր Սէնտմէն» երգը:



Ժխորով յատկանշուած արեւմտեան արդի երաժշտութիւնը այնքա՛ն ամուսնելի է, որ կը ջլատու իրաքցի պատերազմական գերիներու դիմադրականութիւնը:

Մանկական «Միսէյմ սթրիթ» պատկերասփիւռի յայտագիրներուն երաժշտութիւնը եւ «Պարնէյ»-ի փրկիչը երաժշտութիւնը եւս մաս կ'ազդեն անիկան ազդու երաժշտութիւններու ցանկին:

«Չինամարտութեան ժամանակ ինձի պարտադրած էին 45 վայրկյան լսել «Պարնէյ»-ի «Այս եւս ետ» երգը: Երբեք պիտի չուզէի անգամ մը եւս լսել այդ երաժշտութիւնը, կ'ըսէ ամերիկացի զինուոր մը՝ պատասխանելով «Նիուզուիթ»ի հարցումներուն:

## ԴԱՏԱԽԱՋԻ ՄԸ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱՅՐՈՅԹ ԿԸ ՊԱՏՃԱՌԵՆ

ԱՐԱՔ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԻՆ ՍԸ ՈՒՇԱԹԱՓ ԿԸ ԼԼԱՅ ԹԵՐԻԹԱՌԻՆԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԵՋ, ԵՐԸ ԴԱՏԱԽԱՋԸ ԸՄՅ ԿՈՒ ՏԱՅ, ԹԵ ԱՐԿԵՕԸ ԱՆ ԱՇԱԲԿԻ՞Չ Է: ՆՈՅՆԻՍԿ ԶՈՒԼՈՒՄԸ ԳԻ ԶՆՋԵՐ ՆԱՍԱՏԻՊԱՐՆԵՐԸ: «ՏԸ ՃՈՒՆԸԸ ՆԻՈՒՉ» ԿԸ ԳՐԵ.

Անիս Խոտըր գանգաւորներ կայացուցած է Թերթերունի դատախազ Ուլըմ Քրոսպիլի դէմ: Ան դատական ատեն ներկայացած էր կառատան մը երկու տոմսերուն վերաբերող վէճի մը պատճառով: Մինչ Խոտըր կը մօտենար դատախազին սեղանին, դատախազը իր անունը արտասանած էր բարձր ձայնով եւ՝ հարցուցած, թէ արդեօք ան ահաբեկիչ էր: Խոտըր կ'ըսէ, թէ ականարկութիւնը ցնցած էր զինք, սակայն ինք հակազդած էր տկար ժպիտով մը:

«Նախատուած զգացի, սակայն զգացումը գապեցի», կ'ըսէ Խոտըր: Սակայն ան հետզհետէ անհանգիստ զգացած է: Լսելէ ետք կառատան տոմսերը անտեսած ըլլալու իր բացատրութիւնը, դատախազը հարց տուած է. «Չես ուզեր վճարել այս տոմսերուն գինը: Այդպէս չէ՞»:

Ապա ան ըսած է. «Դրամ ունի՞ս ահաբեկիչներու զօրակցելու համար, բայց չես ուզեր տոմսի մը գինը վճարել»: Խոտըր կ'ըսէ. «Չէի հաւատար, որ այս խօսքերը կը լսէի»:

Խոտըր չէ կրցած բողբոջել եւ գրեթէ անմիջապէս նուազած է ու գետին ինկած: Ոստիկաններ օգնած են իրեն եւ շտապ օգնութեան ինքնաշարժ մը կանչած են: Սակայն Խոտըր անմիջապէս վերազատու է ինքզինք եւ մերժած է բժշկական որուճ օգնութիւն:

Քրոսպիլ (79 տարեկան) հաստատած է իր կատարած առաջին ականարկութիւնը, որ Խոտըրի հարց կու տար, թէ արդեօք ան ահաբեկիչ էր, եւ կ'ընդունէի, թէ ատիկա «անպատշաճ կրնար

ըլլալ», սակայն կը ժխտէ ահաբեկչութեան զօրակցելու լաւելեալ որեւէ ականարկութիւն:

Խոտըր (46 տարեկան) ծնած եւ հասակ նետած է Լիբանան: Ան Միացեալ Նահանգներ եկած է 14 տարի առաջ, իր ծննդավայրին մէջ ամուսնանալէ ետք: Ան ահաբեկչութեան միջոցով մեղադրուած էր 1993ին եւ ունի 12 տարեկան մանչ մը: Ամուսինը՝ Սուլէյման Թերթիթուրնի մէջ կ'ապրի 1962ին ի վեր:

«Նորտըր բողբոջելներ յղած է նահանգային եւ տեղական իշխանութիւններու: Անոր ընտանիքը Մեպտեմբեր 11ի յարձակումներէն ի վեր այնքան վատ վերաբերումի արժանացած է, որ զատախազի մը անփափկանկատ ականարկութիւնները մտահոգութիւն չեն պատճառեր:

Սակայն Ամերիկայի Իսլամ կիներու ընկերակցութեան նախագահը՝ Չենա Միքտատի կ'ըսէ, թէ դատախազին ականարկութիւնները յուսաբերութիւն պատճառած են իրեն: «Մեծ ամօթ է, որ նման դատախազ մը, ուսեալ մարդ մը, նման ականարկութիւն մը կը կատարէ, կ'ըսէ ան: Չապա ի՛նչ կարելի է սպասել փողոցի սովորական մարդոցմէ, որոնք ոչինչ գիտեն»:

# ՀԱՐՑԱԳՐՈՅՑ՝ ԹԱԹՈՒՒԼ...

Շարունակում 4րդ էջին

Կ'ուզեմ մէկ այլ հարցի վրայ եւս կէդրոնանալ, որ կ'անջնուի մեր գրաւեալ հոդերուն: Թորքերը առիթը չեն փախցնել կրկնելու թէ հայերը թուրք պետութեան պատկանող հողերու վրայ աչք ունին: Անէի մեծ սուտ մը կարելի չէ երեսակայել. սուտ մը, որ դժբախտաբար, ճշմարտութեան շղարշով մը կը թողարկուի ամէն անգամ որ հայերս «Թրքահայաստան» կ'անուանենք Արեւմտեան Հայաստանը: Արդեօք ռեւէ մէկը իմացած է յոյն մըրտեան Հայաստանը: Հայաստանի մասն, մաս կը կազմէին Օսմանեան կայսրութեան, իրենց հողերը, միջազգային օրէնքով, կը նկատուէին օսմանեան տիրապետութեան տակ եղող տարածքներ, սակայն ոչ մէկուն մտքին պիտի անցնէր անոնց վրայ «թորք» մակդիրը դնել որպէս պատկանելիութիւն - նոյնիսկ Օսմանեան պետութեան կողմէ պատրաստուած բազմաթիւ քարտէսներ՝ Արեւելեան Անատոլիոյ վեց վիլայէթներուն վրայ կը գտնուէր ԵՐՄԵՆԻՍՏԱՆ կայսրութեան քայքայուածն էտք, օտար ուժերու օրհնութեամբ, շարժելով, տեղահանութիւններով եւ այլ ոճրային ու ասորիանի միջոցներով, տիրապան օսմանեան այդ տարածքներուն եւ վանոնք «թրքական» հող հռչակեցին: Հիմնուած այս պատմականօրէն փաստուած իրողութիւններուն վրայ,

հայ ժողովուրդը իրաւունքն ու պարտաւորութիւնը ունի պահանջատէր մնալու իր դարաւոր, պատմական հայրենիքին: Հարկ է, որ ազգովին, վերջնականապէս հրաժարինք «Թրքահայաստան» ու «թրքահայ» բառերը գործածելէ: Պէտք է ընդունիլ որ բառերն ու անունները ունին իրենց հիօր պղծեցութիւնը մեր ինքնագիտակցութեան, ինքնաճանաչման ու մտածելակերպին վրայ: Ի վերջոյ, մարդ արարածը կրնայ ճանաչուիլ ու ընկալել, մտածել ու խորհիլ ու միտքը արտայայտել բառերու գործածութեամբ միայն. օտար մակդիրներ չդնենք մեզի հարապարտ եղող արժեքներու վրայ, որոնցմէ կարելի տարազոյնը կը մնայ մեր Մայր Հայրենիքը՝ իր արեւմտեան ու արեւելեան տարածքներով:

(Շար. 2)

## ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ո.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ո.
Քուէյթեան տինար	5038,00 - 5063,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ո.
Պահրէյնեան տինար	3986,00 - 4011,00 լ.ո.
Ս.Մ. Էմիրութեան տիրիալ	410,75 - 412,75 լ.ո.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ո.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ո.
Օսմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կիւնէ	249,00 - 259,00 լ.ո.
Անգլիական սթերլին	2523,00 - 2533,00 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	1132,00 - 1137,00 լ.ո.
Թրքական լիրա	105,25 - 105,75 լ.ո.
Կիպրական փաունտ	3005,00 - 3030,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,70 լ.ո.
Ամերիկեան հապար ֆրանք	13,00 - 13,10 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1114,00 - 1119,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	1005,00 - 1010,00 լ.ո.
Եւրօ	1760,00 - 1770,00 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	138,500 - 143,500 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	124,000 - 129,000 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի	114,500 - 119,500 լ.ո.
Մեքսիքական փէտսու	660,000 - 680,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,200,000 - 17,400,000 լ.ո.
Մէկ օնս ոսկի	356,00 - 356,50 \$
Մէկ օնս արծաթ	4,52 - 4,54 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1665 - 1.1675
Քանադական տոլար	1.3485 - 1.3495
Չուիցերիական ֆրանք	1.3295 - 1.3305
Ճափոնական եւն	118.71 - 118.81
Մէկ սթերլին	1.6735 - 1.6745

Մէկ գոլար 560 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում

Ա. կարգ	5	4 7/8
Բ. կարգ	5 1/8	5 1/8

ԼՈՒՍՏԱՅՈՒՄ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

**ՔՈՅՐ ՅԱՍՏԻԿ ՏՈՍՊՈՒՐԵԱՆ - ԿՐԱՆԵԱՆԻ** մահուան քառասունըօր առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Ջալքայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

**ԹԱԹՈՒՒԼ ՍՈՒՐԵԱՆԻ** մահուան ԾԸ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատնաս-ճից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՀԱՄԲԻԿ ԶԵՆՏԵՐԵԱՆԻ** մահուան քառասունըօր առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատնաս-ճից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ՌՈՒԲԵԼ ԶԵՆՏԵՐԵԱՆԻ** մահուան քառասունըօր առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատնաս-ճից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԵՓՐԵՄ ԶԵՇՈՇԵԱՆԻ** մահուան Գ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

**ԱՐԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ** մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Ջալքայի Հայ Կաթողիկէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

**ՎԱՐԴՈՒՆԻ ԱՆՏՈՆԵԱՆԻ** մահուան քառասունըօր առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 22 Յունիս 2003, Այնճարի Հայ Կաթողիկէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

## ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5466 Պատրաստեց՝ Տ.Ա. ԱՐԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ԵՌՈՒՋՈՒՄԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՍ
1. Արշաւ - Ծագում:	1. Ստոյգ - Ծանրուորդ:
2. Ճաշարանի մատուցող - Այրուբենչն:	2. Քառածայր - Գեղեցիկ արքայ:
3. Փուշ - Լուսնի տակ:	3. Ուրոյն - Խուճ - Իրերայաջորդ տառեր:
4. Իւրացոր - Ասեղ-նագործի փայտեայ կազմած:	4. Ճարպիկ գող:
5. Ասկերանի գիւղերէն - Ճշմարիտ:	5. Յակորի եղբայրը - Հացաբոյսերէ ստացուած մածուցիկ նրթ:
6. Գարշահոտութիւն - Վերը, վախճան:	6. Երկարի տապար - Խօսակցութիւն:
7. Մարդախոտ:	7. Կրկնուած բաղաձայններ - Միաշարթ:
8. Յուցական ածական - Կոպիտ (հակ.) - Եգիպտական ղից:	8. Կողի - Այրուբենչն:
9. Յուրտ երկիրներու գազան - Իրլանտայի նախկին անուանումը:	9. Պատենագէն կամ մարտանաւ:
10. Երեսուցի - Կղզանքի ծակ:	10. Հայկին հակառակորդը - Լարաւոր նուագարան (հակ.):

**ԹԻՒ 5465**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Գ	Ղ	Ա	Մ	Ի	Գ	Ա	Ն	Գ
2	Բ	Ա	Կ	Ա	Ր	Գ	Պ	Ա	Ն
3	Ի	Կ	Ն	Մ	Ի	Ա	Յ	Ն	
4	Բ	Ի	Ր	Ա	Ն	Ա	Ն	Ն	Գ
5	Ե	Ա	Ն	Ա	Ճ	Ա	Ն	Ճ	
6	Մ	Խ	Ա	Ի	Ր	Ա	Ա	Ա	
7	Ա	Տ	Յ	Ա	Ն	Կ	Ե	Ր	Գ
8	Լ	Ի	Ա	Ս	Ա	Ղ	Մ	Ա	
9	Բ	Ք	Ա	Ս	Ր	Ա	Ա	Ա	
10	Ա	Ն	Ա	Հ	Ի	Տ	Կ	Ի	Ի

## ★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Օրուան դժուարութիւններուն լրջութեամբ չէք մօտենար: Աստուծոյ պիտի չփախախտի: Հետապնդեցէք օրուան հարցերուն բարոյ լուծումը:

☆ **ՑՈՒՆ** (21 Ապրիլին 21 Մայիս)

Այսօր դուք ձեզ շատ առանձին պիտի գգաք, պիտի ձանձրանաք: Բայց այս փոքր տագնապը շուտով պիտի անցնի ու պիտի միանաք ձեր սիրած մթնոլորտին:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսին 21 Յունիս)

Այսօր շատ ուշադիր եղէք՝ ձանր սխալ մը չգործելու, որպէսզի վնաս չկրէ, կամ չվտանգուի պաշտօնի բարձրացման կամ ամսականի յաւելման ձեռքով:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսին 23 Յուլիս)

Եթէ ձեր սրտին սիրած անձը ձեզմէ հեռու տեղ մը կ'ապրի, մի՛ կասկածիք անոր անկեղծութեան, աւելի վստահեցէք անոր եւ յոռի միտքեր մի՛ ունենար:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Կ'ուզեք ունենալ ձեր անկախութիւնը, բայց չէք հանդուրժեր, որ ձեր սիրելիին հակառակի ձեր այս փափաքին: Համաձայնութեան եզր մը գտեք:

☆ **ԿՈՅՄ** (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Այսօր շատ խանդավառ ու ոգեւորուած պիտի ըլլաք ու պիտի հրաւիրեք ձեր սիրած անձը, ձեր պաշտօնակիցը կամ ձեր բարեկամը՝ միասնաբար պտոյտ մը կատարելու: Օրը պիտի անցնի հաճելի եւ գուրաք:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Գլխու պտոյտը կամ գլխու մնայուն ցաւը հաւանաբար հետեւանք են ձեր աչքերուն ստեղծած մէկ բարբոթութեան: Հետեւաբար ցացեք ակնաբոժի մը:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Եթէ մարզանքի հետեւող էք, դուք ձեզ ախոյեանի տեղ մի՛ դնէք, դժուար մարզածեւեր մի՛ որդեգրէք, որովհետեւ կրնաք վնասուիլ կամ վիրաւորուիլ:

☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Եթէ ճաշի հիւրեր հրաւիրած էք, կամ՝ ձեր բարեկամները, այսօր դարձեալ հեռաձայնեցէք անոնց, յիշեցուցէք ժամադրութիւնը, որպէսզի անհամ կացութիւն մը չստեղծուի:

☆ **ԱՅՄԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Եթէ ձեր ընտանիքին մէկ գաղտնիքը թուաւորած է ձեր կեանքը առեւտրի մը վրայ, պարզեցէք այդ գաղտնիքը: Համաձայնութիւն մը ընտանիքին միջև անհամեմտութեան հետ լաւ արդիւնք պիտի տայ այս առնչութեամբ:

☆ **ՄՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարին 19 Փետրուար)

Գանձելիք գումարներ ունիք, հաւանաբար՝ հատուցումի հարց մը, որուն վնասումը ուշացած է: Այսօր հաւանաբար ստանաք այդ ուշացած գումարը:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարին 20 Մարտ)

Այսօր անտրամադիր էք, որովհետեւ ոչինչ լաւ է. ինչ որ ուզեք ընել, չի յաջողիր: Մի՛ սրտնեղիք: Վաղը ամէն ինչ պիտի յստականայ եւ ձեր տրամադրութիւնը պիտի բարձրանայ:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

## ՂԱՏԱ ԺԱՄՄԱԼԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

« Ա ժ ի ա լ »  
ցուցարարը  
12 Յունիսին ի վեր կը հիւրընկալէ լիբանանցի գեղանկարիչ Ղատա Ժամմալի գեղանկարներն նոր հաւածաքոն, որ բաղկացած է 45 գործերէ:



ղեր, որոնց վրայ խաւառ խաւառ են անցնելու տաք եւ վառ գոյներու ներկեր: Անոնց ամբողջութիւնը շարժում է ուժականութիւն կը հաղորդէ Ղատա Ժամմալի գեղանկարներուն:

Իր ուրոյն ռճով յատկանշուող այս արեւտագէտին գործերուն մէջ գաղափարները կ'արտայայտուին կէտերով, գիծերով, երկրաչափ ա կ ա ն ն իրբացած ձ ե լ ե թ ո ռ կրկնութիւններով, արաբերէն տառերով եւ կէտադրական նշաններով:

Ղատա Ժամմալի գործերն օրինակ մը

տարբեր արտայայտութիւնը եղած են տիրապետող մտածումին կամ գաղափարին: Արեւտագէտը յարողած է բառերն ու տառերը վերածել գեղանկարչական կշռոյթներու:

Ղատա Ժամմալի գեղանկարներն ցուցադրուի Ռուսիոյ Գեղարվեստի ակադեմիայի Գեղարվեստի թանգարանին մինչեւ 28 Յունիս: Չայն կարելի է այցելել առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

## ՕՂԵՐԵՆՈՅՑ

ՈՒՐԱԹ,  
20 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ  
ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ  
ՅԵՐԵԿ՝ 28°C

ԳԻՇԵՐ՝ 21°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝  
77%

## ԱՅՍՕՐ

- Երաժշտական հանդէս՝ «Յէք տը լա միւլիք», որը երաժշտութիւն, ժամը 20:00ից, Սէն Նիքոլայի սասիճաններ:

- Նուագահանդէս՝ ելոյթ կ'ունենայ Զիտա Սահայ (ուս), ժամը 20:30ին «Մետիսէ» թատերասրահ:

- Ցուցահանդէս՝ «Տարած ալ ֆան», Սէն Նիքոլայի սասիճաններ, մինչեւ 22 Յունիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Թէն Վիուզ», «Նիսիս Էս.» ցուցասրահ, մինչեւ 28 Յունիս:

- Թատրոն՝ «Սոյո», ժամը 20:30ից, «Մետիսէ» թատերասրահ, մինչեւ 21 Յունիս:

## ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՄՈՒՄ 20 Յունիս 1953

## ՈՒՍՈՒՑԶԱՊԵՏ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Ուսուցչապետ եւ մեծանուն դաստիարակ, Պերպերեան վարժարանի հիմնադիր Ռեթեոս Պերպերեանի ծննդեան 100րդ տարեդարձ մեծ շուքով տօնուցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ «Նարեկեան» սրահին մէջ: Ներկայ էին Գարեգին պատրիարք, հոգեւորական դասը եւ ազգայիններու հոծ բազմութիւն մը:

Բացումը կատարեց Պերպերեան յանձնախումբի ատենապետ տոքթ. Վահէ Հինգլեան, որ ներկայացրեց մէկ վայրկեան յոտնկայս լուսութեան հրաւիրելու ետք, ամփոփ տեղեկութիւններ տուաւ Պերպերեանի եւ համանուն վարժարանի գանազան բաժանումներուն, ուսուցիչներուն եւ հսկողներուն մասին:



Ապա բեմ հրաւիրուեցաւ պատրիարքայը, որ վերջումակն գրութիւն մը կարդաց, Երրորդութիւն Պերպերեանի կեանքը եւ գործունէութիւնը՝ իբրեւ կրթական անխնայ մշակ, ան ինկար պատեղելի վրայ՝ մշակութան ունենալով Գեղեցիկը, Բարին, Ճշմարիտը, Հաւատքը, Յոյսը եւ Մէրը: Նիւթը եւ շուկան չեղան իր կեանքը, այլ հոգի, որ բուն մարդը կը գծէ:

Տիրան Անդրեասեան մտերմական դրուագներ պատմեց անոր աշակերտներուն կեանքին եւ ամէն-

**ԱՅՍՕՐ 20 ՅՈՒՆԻՍԻՆ**

■1890.- Կարոյն դէպքը. բախում եկեղեցիին մէջ, ապա կոտորած եւ թալան:  
■1912.- Մահ բանաստեղծ եւ մանկավարժ Ղազարոս Աղայեանին:  
■1984.- Վիեննայի բրդական դեսպանատան աշխատանքի բաժանմունքի խորհրդակալ Էրտողան Օզէն ականուած ինքնաշարժով կ'ահաբեկուի Շ. Յ. Բանակին կողմէ:  
■1992.- Լ. Ղ. Շի Գերագոյն Խորհուրդի նախագահութիւնը եւ կառավարութիւնը հանրապետութեան տարածքին կը հաստատեն արտակարգ դրութիւն:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՄԻՋՑԱՄԱԶԱՍԱՍԱՅԻՆ ՄՐՅԱԾՄԵ

- ԹՈՒՐԲԻԱ -

**ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ՝ 2-1  
- ՊՐԱԶԻԼ - ՔԱՍԵՐՈՒՆ՝ 0-1**

Միջամաքանասպին ֆուտբոլի մրցաշարին Ա. հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան երկու ճակատումներ՝ Ա. խմբակին ներս:


Առաջին մրցումը տեղի կ'ունենայ Լիոնի մէջ, ուր ֆուտբոլիստները Նոր Զելանդիայի դէմ, ժամը 20:00ին (Պէյրոսի ժամով): Անոնք երկուքն ալ իրենց կատարած առաջին մրցումին պարտութիւն կրեցին:

Երկրորդ մրցումը տեղի կ'ունենայ Սէնթ Էթիէ-նի մէջ, ուր մրցաշարքը հիւրընկալող երկիրը՝ Ֆրանսա կը ճակատի ձափունի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 22:00ին:

Երկու կազմերն ալ իրենց կատարած առաջին մրցումին յաղթանակ արձանագրելով, պիտի փորձեն այսօր եւս ալ յաղթանակ մը արձանագրել:

Բ. խմբակին ներս, երէկ տեղի ունեցան երկու ճակատումներ: Առաջինին, Թուրքիա 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Միացեալ Նահանգները: Երկրորդ ճակատումը, որ տեղի ունեցաւ Պրայիթի եւ Քամբրուի միջեւ, վերջ գտաւ Քամբրուի յաղթանակով, 1-0: Կոլը նշանակեց Էթօ, 83րդ վայրկեանին:

## ՊԱՃԻՈ ՊԻՏԻ ՄՆԱՅ ՊՐԵՇԻԱՅԻ ՀԵՏ



Պաճիօ

Իտալացի միջազգային նախկին մարզիկ Ռոպերթօ Պաճիօ իտալական «Կազեթա Տելլօ Սփորթ» օրաթերթին հետ հարցազրոյցի ընթացքին ըսաւ, թէ հակառակ մարզիչ Գարլօ Մացոնիի մեկնումին, ինք պիտի մնայ Պրեշիայի հետ:

«Վստահարար կը տիրինք անոր մեկնումին համար, սակայն որեւէ պատճառ չենք գտներ խուճմէն հեռանալուն: Երեք եղանակ անոր հետ յաջողեցանք յաւ արդիւնքներ ձեռք ձգել: Սակայն այդ մէկը անկասկած կրնայ շարունակուիլ անոր մեկնումէն ետք ալ», կ'ըսէ 36 տարեկան Պաճիօ, որ նախապէս մաս կազմած է Ֆիորենթինայի, Ետիվենթուսի եւ Ա. Սի. Սիլանի:

Նշենք, թէ Մացոնիի փոխարէն մարզիչ նշանակուեցաւ Ճիաննի Տը Պրայի:

## «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՆՉԱՆՔ»

Շարունակուած 7րդ էջէն

Հոգեբանական դործողութիւններու ընկերութեան վեթերաններու ընկերակցութեան փոխ նախագահ Ռիք Հոֆման «Պի. Պի. Սի.»-ի «Թուեայ» յայտարարին մէջ ըսած է, թէ նման միջոցներ երկարատեւ ազդեցութիւններ չեն գործը բանտարկեալներուն վրայ:

«Լսողական այս միջոցին կիրարկուող համեմատաբար նոր է հարցաքննութեան մէջը, - ըսած է ան: - Անվերնաս եւ ոչ մահացու այլ միջոցներ եւս կը կիրարկուին, ինչպէս՝ անքննութիւն, որոնք երկարատեւ ազդեցութիւններ չեն գործը, սակայն կը քայքայեն հարցաքննութեան դիմադրելու կամքը»:

«Էմբլիթի Ինթերնէշնլը» Պի. Պի. Սի.-ի համացանցի կայքին ուղղուած գրութեան վրէ մէջ կ'ըսէ, թէ անունուած մէկ իրաքցի գերի, քաղաքային մը, որ հետագային ազատ արձակուած է, տեղեկացուցած է, թէ 4 օր արթնուն մնացած է բարձր երաժշտութեան յետքով:

«Ասիական հարց մըն է, որ մեծապէս կը մտահոգէ մեզ: Երկար ժամանակ արթնուն մնալու պարտադրանքը կրնայ տանջանք նկատուիլ, - կ'ըսէ «Էմբլիթի Ինթերնէշնլը»-ի մէկ բանբերը: - Շատ դժուար է անհասկանալի ինչ պատճառով միջոցներու եւ տանջանքի միջեւ սահմանները ճշդելը: Այդ սահմանները կը տարբերին անձէ անձ եւ կախեալ են իւրաքանչիւր պարագայէ»:

Այժմ կազմակերպութիւնը կը փորձէ քննել, թէ արդեօք ամբերիկացիք եւ բրիտանացիք յարգած են պատեթազմական դերերնու հետ վարուելու իրենց պատասխանատուութիւնը՝ համաձայն ժրնեի Ուիլսոնի:

## ՌՈՆԱԼՏԻՆԻՈ Ե՞ՐԱ ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏԻ ԸՈՅԼԻՆ ՊԻՏԻ ՄԻԱՆԱՅ

Այնպէս կը թուի, որ Ռեալ Մատրիտ շուտով է, թէ ո՞ր անունի մարզիկը միացնէ իր շարքերուն, որովհետեւ Տէյվիտ Պեքհամի ստորագրութիւնը պայահովել է տք, այժմ անկա կ'ուզէ ամէն գնով ձեռք ձգել պրայիցի Ռոնալտինի ստորագրութիւնը:

Ըստ ֆրանսական «Էքսփրէս» օրաթերթին երկուսն Թիւրին, Ռեալ Մատրիտի նախագահ Ֆլորենթինօ Փերէս հեռաձայնային կապի մէջ մտնելով Փ. Ս. Ժ.ի նախագահ Ֆրանսիս Կրէյի հետ, տեղեկութիւններ ուզած է Փարիզ Սէն Ժերմէնի մաս կազմող Ռոնալտինին ձեռք ձգելու համար:

Հակառակ սպանական կազմին այս հետաքրքրութեան, այնպէս կը թուի, որ Սէն Ժերմէնի նոր մարզիչ Վալիտո Հալիլիոօիչ մտադիր չէ ծախել իր 23 տարեկան մարզիկը, թէ անոր համար կրնայ գանձել 15 միլիոն ամերիկեան տոլար եւ իր կազմը օժտել նորեկ մարզիկներով:

Սակայն այնպէս կը թուի, որ առանց Ռոնալտինի ծախելու Փարիզ Սէն Ժերմէնի չի կրնար նորեկ մարզիկներ գնել, որովհետեւ խումբին բաժնետէրը՝ «Քանալ Փիլիս» հրահանգած է Կրէյի յառաջիկայ եղանակին խումբին պիտուէն 78 միլիոն եւրոյէն կրճատել 50 միլիոն եւրոյի:

Մանչեսթըր Եունայթըտի պատասխանատուներուն համաձայն, Ռոնալտինի իրենց կազմին միանալով կրնայ շատ լաւ արդիւնք արձանագրել, իր կողքին ունենալով հոլանտացի Ռուտ վան Նիսթըրլույը:


ԹԵՆԻՍ

## ՔՐԱՅԻՉԷՔ ԼՔԵՑ ԱՍՊԱՐԷԶԸ

1996ին, Ռիմպլոտընի կրան շէմի մրցաշարքին բաժակին տիրացած հոլանտացի Ռիչըրտ Գրայիչէք երէկ լքեց թենիսի իր ասպարէզը:

2001ին աջ ձեռքի վիրաբուժութեան ենթարկուած հոլանտացին, արդէն իսկ տարի մը ետք յաջողեցաւ հասնիլ նոյն այս մրցաշարքին քառօրյա աւարտականին: Վերջին երեք տարիներուն ոչ մէկ տիպոսի տիրացած Գրայիչէք, արդէն իսկ բաշտուած էր Ֆրանսայի «Ռոլան Կարոս»-ի կրան շէմի միջազգային մրցաշարքին:

Ռիմպլոտընի մրցաշարքին մասնակցելու պարագային, ան Բ. հանգրուանին իրեն մրցակից պիտի ունենար անցեալ տարուան տիրութեան կիր՝ Էնթոնի Զուկիթը (Աւստրալիա):



Բրայիչէք

որ կը տիրանայ այդ ծախսին: Այդ տիպոսներէն բացի ան չհասցեաւ նաեւ շուրջ տասը միլիոն ամերիկեան տոլար:

ուրեքնալիք կրան շէմի մրցաշարքին, ոչ թէ վիրաբուժող ըլլալուն պատճառով, այլ որովհետեւ անոր կիներ՝ Մարթա աղջիկ գաւակ մը ունեցաւ՝ Արոս:

Իր գաւակին ծննդեան լուրը իմանալէն անմիջապէս ետք, ան վերադարձաւ Սպանիա, ամբողջութեամբ մոռնալով Ռիմպլոտընի մրցաշարքը:

29 տարեկան Գորեթիս անցեալ Չորեքշաբթի օր յայտնեց, թէ անձկանօք կը սպասէ յառաջիկայ երեքշաբթի օր ճակատելու համար բրիտանացի թիմ Հենմանի դէմ:

Հետաքրքրական պիտի ըլլայ իմանալ, թէ ո՞ր մարզիկը պիտի ըլլայ Գորեթիսան փոխարինողը, որ հակառակ Ա. հանգրուանին իր կրած պարտութեան, դուրս պիտի չմնայ մրցաշարքին:

Նշենք, թէ 1998էն ի վեր Գորեթիս բացառապէս Ռիմպլոտընի մրցաշարքին:



Զորեթիս

Գրայիչէք, որ 14 տարեկան իր ասպարէզին ընթացքին չհասցեաւ 17 տիպոսներ, յաջողեցաւ դառնալ առաջին հոլանտացին, Ռիմպլոտընի մէջ տեղի

●ՍՊԱՆԱՅԻ Այեքս Բորեթիս շատ հաւանաբար բացակայի յառաջիկայ երեքշաբթի, 23 Յունիսի նախաձեռն հոլանտացին,

## ՄԱՐՍԷՅ Կ՝ՈՒՉԷ ԶԵՌՔ ԶԳԵԼ ՆԱԲԱԹԱՆ

Մարսէյի մարզիչ Ալէն Փերէն երէկ ըսաւ, թէ յառաջիկայ եղանակին համար ամէն գնով աշխատանք կը տանի իր կազմին միացնելու համար Փարմաի ձախնիցի միջնասպի Հիտեթոշի Նաքաթան: Նշենք, թէ 26 տարեկան այս մարզիկով հետաքրքրուած է նաեւ Չելսի:

Ըստ շրջան ընող լուրերին, Փարման իր մարզիկին համար կը պահանջէ 15 միլիոն եւրօ (17,5 միլիոն ամերիկեան տոլար): Նախապէս Ա. Էս.



Նաքաթա

Ռոմայի եւ Փերուճիւնի մասկապիւմ Նաքաթա, ներկայիս լաւ յարաբերութիւններ չունի իր մարզիչին՝ Չելսիի Փրանտելիի հետ:

## ՄՈՆԱԶՈ ՊԻՏԻ ՄՆԱՅ Ա. ԴԱՍԱԿԱՐԳ

Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիօնը երէկ յայտնեց, թէ 2002-2003 եղանակին ախոյեանութեան աւարտին փոխ ախոյեան հանդիսացած Մոնաքօ պիտի չփոխադրուի Բ. դասակարգ, այլ պիտի մնայ Ա. դասակարգ, հակառակ անոր որ անցեալ ամիս կը կարծուէր, որ անկա նիւթական գեղծարարութիւններ կատարած է:

Կը կարծուի, որ իշխանապետական կազմին փրկարարը եղած է Մոնաքօյի իշխանը՝ Ալպէր, որ խումբին օժանդակած է:

Ըստ տրամաչափութիւններուն, Մոնաքօյի պարտքերը կը տարուրեւնան 53 միլիոն եւրոյէն (62,5 միլիոն ամերիկեան տոլար) 87 միլիոն եւրոյի (102,8 միլիոն ամերիկեան տոլար) միջեւ:

ԿՈՓԱՍԱՐՏ

## ԼՈՒԻՍ - ԽԼԻՑԽՈՅ ՃԱԿԱՏՈՒՄԸ՝ ՎԱՂԸ



Վիթալի (ձախից) եւ Լեոնըս

Վաղը՝ Շաբաթ, Լոս Անճելըսի (Մ. Ն.) «Սթեփըյ կեդրոնին» մէջ տեղի կ'ունենայ սպասուած ճակատումը՝ կոփամարտի ծանր կշիռի աշխարհի ախոյեան բրիտանացի Լեոնըս Լուիսի եւ ուքրաինացի Վիթալի Խլիցխոյի միջեւ, թէ անկազմունքով Լուիս պիտի ճակատէր քանատացի Քրիք Ճոնսոնի դէմ: Սակայն այս վերջինը վիրաւորուելով քաշուեցաւ այս ճակատումին:

Իր կատարած նախորդ ճակատումներուն 40 յաղթանակ արձանագրած, մէկ հասարակութիւն արձանագրած եւ երկու պարտութիւն կրած Լուիս, պիտի փորձէ անպայման յաղթանակ մը արձանագրել, պահելու համար կոփամարտի աշխարհի ախոյեանութեան տիտղոսը:

## ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԵՆ

●ԱՊՂԻ Երկիրներու մէջ տեղի ունեցող քանակային ներու ըմբռնման մրցումներուն, հայրենի ըմբռն ժիրայր Յովհաննիսեան (Վանաձորէն) 66 թի: դասակարգին մէջ իր կատարած հինգ մրցումներուն բոլորին ալ յաղթանակներ արձանագրելով արժանացաւ ախոյեանութեան տիտղոսին:

●ԶՈՒԻՑԵՐԻՈՅ մէջ տեղի ունեցող ճատրակի միջազգային մրցաշարքի 4րդ հանգրուանի մրցումներէն ետք, հայրենի վարպետ Վլատիմիր Յակոբեան, որ ցարդ միայն 0,5 կէտ կրցած է պայահովել, ընդհանուր դասաւորման մէջ կը գտնուի ոչ նախանձելի դիրքի վրայ՝ դասաւորման վերջին դիրքերուն վրայ:

## ԴԱՏԱԽԱՂԻ ՄԸ ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուած 7րդ էջէն

Թերիթաունի դատարանին մէջ ձայնագրութեան գործիքներ չկան եւ ոչ մէկ արձանագրութիւն պահուած է փաստելու համար խոտորի վկայութիւնը: Դատարանին պաշտօնեան կ'ըսէ, թէ ինք ներկայ էր դէպքին պահուած, իսկ դատաւորը կ'ըսէ, թէ իրաւաբանի մը հետ կը խօսէր եւ իրարանցում մը կատարած է միայն, երբ խոտորը նուազած է: Յստակ չէ, թէ այդ պահուած քանի՞ հոգի կար դատարանին մէջ եւ քանի՞ հոգի լսած է ակնարկութիւնը: Խոտորը կ'ըսէ, թէ ներկայները անձանօթ էին իրեն, սակայն ան մտահոգուած է, թէ անոնք ի՞նչ պիտի մտածէին իր մասին, դատախազին ակնարկութիւնը լսելէ ետք:

Խոտորը յատկապէս վիրաւորուած է, որովհետեւ ակնարկութիւնը կատարողը դատախազ մըն էր, որ պէտք էր անկողմնակալ ըլլար:

«Ան զի՛ս պէտք է դատէ եւ ոչ՝ անունս, - կ'ըսէ ան: - Կր սիրեմ այս երկիրը, որ իմ երկիրս է: Տան մէջ մենք արարեցին երաժշտութիւն չենք ունիլդերը: Ամէն տարի 1.5 մեթր բարձրութեամբ տօնածառ մը կը դնենք մեր տան մէջը»:

Խոտորը կառատան երկու տոմսերը չեղեալ նկատուած են, երբ ան ուշքը վերագտած է եւ՝ դատարանէն դուրս հանուած: Քրոսպի ըսած է, թէ տոմսերէն մէկը անտեղի կերպով տրուած է, սակայն ան չէ կրցած բացատրել երկրորդ տոմսը չեղեալ համարելու պատճառը:

Քրոսպի չի իշխեր խոտորի հետ իր փոխանակած իսուքերուն ընթացքը: Ան կը կարծէ, թէ ահաբեկիչ ըլլալու հարցումը հարցուցած է, երբ Խոտորը ձեռքերը շարժելով մօտեցած է իր սեղանին՝ բացատրութիւն մը տալու համար տոմսերուն վերաբերեալ: Ան կ'ըսէ, թէ Խոտորը շարժումները սպառնական չէին եւ իրականութեան մէջ չի գիտեր, թէ ինչու ահաբեկչութեան նիւթը ըրած է այդ պահուած:

«Հաւանաբար կը կատակէի հետը, - կ'ըսէ Քրոսպի: Երբեմն պարզապէս այս հարցումը կ'ուղղես մարդոց: Չեմ գիտեր, թէ ի՞նչ բանի վրայ հիմնուած էի գայն»:

Քրոսպի հանրապետական է: Ան Թերիթաունի դատախազն է 1987էն ի վեր եւ երկու ամիս առաջ դատախազի իր հինգերորդ շրջանը սկսաւ:

(ՅԱՊԱՒՈՒԱՏ)

